ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 ապրիլի 2023 թվականի N 462 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 1183-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ) և պետական կրթաթոշակ տալու կարգը, ինչպես նաև նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման չափը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 8-ի N 1986-Ն և 2005 թվականի սեպտեմբերի 15-ի N 2114-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1183-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝

1) 1-ին կետը «հեռակա» բառից հետո լրացնել «, հեռավար» բառով.

2) 5-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը լրացնել նոր՝ «դ» պարբերությամբ՝

«դ. սույն ենթակետի «բ» և «գ» պարբերությունների պահանջները տարածվում են նաև վճարովի համակարգում սովորող՝ Լեռնային Ղարաբաղի և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած հայազգի ուսանողների, ինչպես նաև հայազգի այն օտարերկրյա ուսանողների նկատմամբ, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ.»,

բ. 2-րդ ենթակետի «դ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսնուն (կնոջը), մինչև 27 տարեկան զավակներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.».

3) 10-րդ կետի «հանրակրթական ուսումնական հաստատությունն» բառերը փոխարինել «հանրակրթական (միջնակարգ կամ ավագ դպրոց), նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններն» բառերով.

4) 11-րդ կետի 2-րդ ենթակետի՝

ա. «ա» պարբերության «60-70» թվերը փոխարինել «60,00-70,99» թվերով,

բ. «բ» պարբերության «71-79» թվերը փոխարինել «71,00-79,99» թվերով,

գ. «գ» պարբերության «80» թիվը փոխարինել «80,00» թվով.

5) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սույն կարգի 5-րդ կետի 2-րդ և 6-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով սահմանված կարգավիճակները՝

1) ուսումնական տարվա ընթացքում (բացառության տվյալ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում) ձեռք բերելու դեպքում ուսանողական նպաստը տրամադրվում է տվյալ ուսումնական տարվա համար՝ սույն կարգի 7-րդ, 8-րդ և 11-րդ կետերով սահմանված չափերին համապատասխան.

2) ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ձեռք բերելու դեպքում ուսանողական նպաստը տրամադրվում է տվյալ կիսամյակի համար՝ սույն կարգի 7-րդ, 8-րդ և 11-րդ կետերով սահմանված տոկոսներին համապատասխան:».

6) 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետով և 6-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով սահմանված ուսանողների խմբերին ուսումնառության ընթացքում համապատասխան կարգավիճակը կորցնելու դեպքում ուսանողական նպաստի փոխհատուցում չի տրվում ուսումնական հաջորդ տարվանից:».

7) 16-րդ կետում՝

ա. 1-ին և 2-րդ ենթակետերում «պարապմունքներին» բառը փոխարինել «պարապմունքների սկզբին» բառերով,

բ. 1-ին ենթակետը «առկա» բառից հետո լրացնել «կամ հեռավար» բառերով,

գ. 2-րդ ենթակետի «երկու շաբաթների» բառերը փոխարինել «մեկական շաբաթների» բառերով.

8) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16. 1-ին կետով՝

«16.1. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված կարգավիճակները 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ժամկետներից հետո ձեռք բերելու դեպքում՝ համապատասխան կարգավիճակը ձեռք բերելու ուսումնական տարում ուսման վճարի փոխհատուցում ստանալու մասին դիմումներն ընդունվում են հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում՝ 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ժամկետներում՝ նախորդ ուսումնական տարում համապատասխան կարգավիճակը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:».

9) 34-րդ կետի «հոկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «նոյեմբերի 10-ը» բառերով, իսկ «մարտի 30-ը» բառերը՝ «ապրիլի 10-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.04.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ